ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«28» օգոստոսի 2024թ. ԱՊՀՊ-1700

«Տենդեր Պրո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08274655)
Հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 1փկղ., 14շ., 147բն
հեռ. +374 41 787 672

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/17» , «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19», «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգերի շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «Տենդեր Պրո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն) Ընկերությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/17» ընթացակարգի շրջանակում, «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19» ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/21» ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որից հետո «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվել են ապրանքների մատակարարման պայմանագրեր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը սույն թվականի օգոստոսի 21-ին Ե/1934-24 գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Կարինե Հենրիխի Մարգարովան և «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Կարինե Հենրիխի Մարգարովան համաձայն ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ծննդյան ակտի գրանցման հանդիսանում է «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Ռաիսա Կամոյի Վարդանովայի մայրը: Ինչպես նաև «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերությունը ընդգրկված է 2023թվականի մարտի 7-ից մինչև 2025թվականի մարտի 7-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով, որ առկա են Կարգի 119-րդ և 121-րդ կետերով սահմանված խախտման հիմքերը, Պայմանագրերը ենթակա է լուծման համաձայն Պայմանգրի 8.3 կետի.

«Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության

համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:»

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները սահմանված կարգով անհրաժեշտ է վճարել Պայմանագրերում նշված հաշվեհամարներին:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, եթե մինչև 2024թ. սեպտեմբերի 5-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, ապա կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար **Ա.ԲԱԲԱՅԱՆ**

Կատարող՝ Ա.Ներսիսյան
Հեռ.՝010 232600 (137)